Հավելված 7
«ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/6» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ն «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/6.1»

ք. Կապան «31» հունվար 2018 թ.

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Կարեն Մելքոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 6 230 618 (վեց միլիոն երկու հարյուր երեսուն հազար վեց հարյուր տասնութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

3. 3 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցները նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի

համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն այս պայմանագրի շրջանակներում գնումը կիրականցվի անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում և կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա:***

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջական խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[3]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
Հասցե՝ ք. Կապան, Մ. Ստեփանյան13	Հասցե՝ ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ	Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 09420382	ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Կ. Մելքոնյան	Տնօրեն՝ Ա. Սարգսյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
« 31 » հունվար 2018 թ. կնքված
«ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/6"1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հ/հ	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	տրանեքսամաթու 50 մգ/մլ 5 մլ՝ Տրանեկսամ	Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ԳՍՊ-459, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան	տրանեքսամաթու 50 մգ/մլ 5 մլ՝ Տրանեկսամ	սրվակ	**1667.2**	**700224**	420	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Մ. Ստեփանյան 13 «Կապանի բժշկական կենտրոն »ՓԲԸ	Յուրաքանչյուր անգան համաձայն պատվերի	Նախատեսվում է գնել 2018թ-ի ընթացքում, յուրաքանչյուր անգամ պատվիրատուից պատվեր ստանալուց 5 աշխատաքնային օրվա ընթաց
2	տրանեքսամաթու 250 մգ դ/հ՝ Տրանեկսամ	Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ԳՍՊ-459, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան	տրանեքսամաթու 250 մգ դ/հ	դեղահատ	**279.52**	**13976**	50			
5	ռանոլազին 500մգ,դեղահատեր երկարատև ձերբազատմամբ ՝ Ռանեկսա	Մենարինի-Վոն Հեյդեն ԳմբՀ, Լեյպցիգեր Շտրասե 7-13, 01097 Դրեզդեն	ռանոլազին 500մգ,դեղահատեր երկարատև ձերբազատմամբ	դեղահատ	**712.77**	**427662**	600			
8	ցիտիկոլին 1000 մգ/ 4 մլ 4 մլ լ-թ ներարկման՝ Սոմազինա	Ֆերեր Ինտերնեյշընլ, ՍԱ., Ջոան Բուկալա, 1-9 08173 Սանտ Կուգատ դել Վալես, Բարսելոնա	ցիտիկոլին 1000 մգ/ 4 մլ 4 մլ լ-թ ներարկման	սրվակ	**2100**	**168000**	80			
9	մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ՝40մգ/մլ+45.2մգ/մլ, 10մլ ,խտանյութ կաթիլաներարկ-ման լուծույթի՝ Պանանգին ամպ. 10 մլ	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ, Հունգարիա	մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ՝40մգ/մլ+45.2մգ/մլ, 10մլ ,խտանյութ կաթիլաներարկ-ման լուծույթի	սրվակ	**293.44**	**88032**	300			
11	մետրոնիդազոլ 0.5 դ/հ	Նիկոմեդ Դանմարկ ԱպՍ, Լանգեբյերգ 1, ԴԿ-4000 Ռոսկիլդե, Դանիա	մետրոնիդազոլ 0.5 դ/հ	դեղահատ	**44**	**30800**	700			

14	նատամիցին 100մգ մոմիկներ հեշտոցային՝ Պիմաֆուցին մոմիկ	Աստելաս Ֆարմա, Իտալիա	նատամիցին 100մգ մոմիկներ հեշտոցային	մոմիկ	**1037.16**	**77787**	75			գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:
16	նատրիումի թիոսուլֆատ սրվ. 30% 5 մլ	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6, Հայաստան	նատրիումի թիոսուլֆատ սրվ. 30% 5 մլ	սրվակ	**43.47**	**82593**	1900			
26	պիրացետամ 400 մգ դ/հ	«Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ, 64, Չապաև փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան, Բելառուս	պիրացետամ 400 մգ դ/հ	դեղահատ	**10.8**	**8640**	800			
31	ջուր ներարկման համար 2 մլ	Լեկխիմ-Խարկով ԲԸ, 36, 17-րդ Պարտսյեզդա փ., 61115 Խ, Հայաստան	ջուր ներարկման համար 2 մլ	սրվակ	**18.63**	**13041**	700			
32	ռանիտիդին (ռանիտիդինի հիդրոքլորիդ) 150 մգ դ/հ	Հեմոֆարմ Ա.Դ., 26300, Վրշաց, Բեոգրադսկիի պուտ բբ, Սերբիա Հեմոֆարմ	ռանիտիդին (ռանիտիդինի հիդրոքլորիդ) 150 մգ դ/հ	դեղահատ	**13.4**	**5360**	400			
34	սիլիմարին 22,5մգ, դեղահատ թաղանթապատ՝ Կարսիլ թ/պ	Սոֆարմա ԲԸ, փ. Իլիենսկո շոսե 16, 1220 Սոֆիա, Բուլղարիա	սիլիմարին 22,5մգ, դեղահատ թաղանթապատ	դեղահատ	**16.8**	**20160**	1200			
35	սուլոդեքսիդ 300ԼՄ/մլ, 2մլ ամպուլներ,լուծույթ ն/ե և մ/մ ներարկման՝ Վեսել ԴՈՒԷՖ	Ալֆա Վասերման Ս.պ.Ա., Վիա Էնրիկո Ֆերմի, 1-65020, Ա	սուլոդեքսիդ 300ԼՄ/մլ, 2մլ ամպուլներ,լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	սրվակ	**1500**	**150000**	100			
36	սուլֆոկամֆոկային 10% 2 մլ լ-թ ներարկման	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6	սուլֆոկամֆոկային 10% 2 մլ լ-թ ներարկման	սրվակ	**55.89**	**40799.7**	730			
39	վինպոցետին 25 մգ/5 մլ 5 մլ լ-թ ներարկման՝ Կավինտոն	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ, Հունգարիա	վինպոցետին 25 մգ/5 մլ 5 մլ լ-թ ներարկման	սրվակ	**306.7**	**30670**	100			
40	վինպոցետին 5մգ/մլ, 2մլ ամպուլնե լ-թ ներարկման	Լեկխիմ-Խարկով ԲԸ, 36, 17-րդ Պարտսյեզդա փ., 61115 Խ	վինպոցետին 5մգ/մլ, 2մլ ամպուլնե լ-թ ներարկման	ամպուլա	**95.2**	**9520**	100			
42	վիտամին B1,վիտամին B2, վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ 5մգ/մլ+2մգ/մլ+ 2մգ/մլ+3մգ/մլ+ 20մգ/մլ, 2մլ ամպուլներ, լուծույթ ներարկման՝ Վիտամին Բ կոմպլեքս	Սոֆարմա ԲԸ, Իլիենսկո շոսե փ. 16, 1220 Սոֆիա, Բուլղ	վիտամին B1,վիտամին B2, վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ 5մգ/մլ+2մգ/մլ+ 2մգ/մլ+3մգ/մլ+ 20մգ/մլ, 2մլ ամպուլներ, լուծույթ ներարկման	սրվակ	**145**	**116000**	800			

46	տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ) 35 մգ դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ	Պոլֆարմեքս Ս.Ա	տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ) 35 մգ դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ	դեղահատ	24.8	74400	3000			
47	ցեֆազոլին (ցեֆազոլին նատրիում) 1000 դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի	"Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ, 64/27, Չապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան, Բելառուս	ցեֆազոլին (ցեֆազոլին նատրիում) 1000 դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի	սրվակ	146	1046820	7170			
49	ցեֆիքսիմ 400 մգ դ/հ՝ պանցեֆ	Ալկալոիդ-ԻՆՏ դ.օ.օ., Սլանդրովափ.4, 1231 Լյուբլյանա-Սլովենիա	ցեֆիքսիմ 400 մգ դ/հ	դեղահատ	540	54000	100			
50	ցեֆոտաքսիմ (ցեֆոտաքսիմ նատրիում) 1000մգ, ապակե սրվակ և 4մլ լուծիչ ամպուլում,դեղափոշի ն/ե և մ/մ ներարկման լուծույթի՝ Կլաֆորան	Սանոֆի Ավենտիս Իլակլարի ՍՊԸ Ստի., Բույուկդերե Կադ. No:193 Լևենտ 34394 Սիսլի-Ստամբուլ, Թուրքիա	ցեֆոտաքսիմ (ցեֆոտաքսիմ նատրիում) 1000մգ, ապակե սրվակ և 4մլ լուծիչ ամպուլում,դեղափոշի ն/ե և մ/մ ներարկման լուծույթի	սրվակ	824	1240120	1505			
54	ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) 500մգ, ապակե սրվակներ դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի	"Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ, 64/27, Չապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան, Բելառուս	ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) 500մգ, ապակե սրվակներ դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի	սրվակ	165	338250	2050			
58	ցիպրոֆլոքսացին 250 մգ դեղահատեր թաղանթապատ	"Բորիսովյան բուժպատրաս-տուկների գործարան" ԲԲԸ, 64/27, Չապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան, Բելառուս	ցիպրոֆլոքսացին 250 մգ դեղահատեր թաղանթապատ	դեղահատ	18.85	56550	3000			
59	ցիպրոֆլոքսացին 500 մգ դեղահատեր թաղանթապատ	"Բորիսովյան բուժպատրաս-տուկների գործարան" ԲԲԸ, 64/27, Չապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան, Բելառուս	ցիպրոֆլոքսացին 500 մգ դեղահատեր թաղանթապատ	դեղահատ	35.3	110136	3120			
62	քլորամֆենիկոլ ,10մգ/գ, 25գ ալյումինե պարկուճ,նրբամածուկ՝ Սինտոմիցինի նրբամածուկ	Նիժֆարմ ԲԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ԳՍՊ-459, Սալգանսկայա փ., 7, Ռուսաստան	քլորամֆենիկոլ ,10մգ/գ, 25գ ալյումինե պարկուճ,նրբամածուկ	հատ	720.8	21624	30			
63	քլորամֆենիկոլ ,5մգ/գ, 25գ ալյումինե պարկուճ,նրբամածուկ՝ Սինտոմիցինի նրբամածուկ՝	Էսկո-Ֆարմ, Հայաստան	քլորամֆենիկոլ ,5մգ/գ, 25գ ալյումինե պարկուճ,նրբամածուկ	հատ	260.8	7824	30			
64	քլորամֆենիկոլ, մեթիլուրացիլ 7,5մգ/գ+40մգ/գ, 40գ, քսուք՝ մեկոլ-բորիմեդ քսուք 40 գ	«Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ, 64, Չապաև փ., Բորիսով 222518, Մինսկ շրջան, Բելառուս	քլորամֆենիկոլ, մեթիլուրացիլ 7,5մգ/գ+40մգ/գ, 40գ, քսուք	հատ	231.03	72774.45	315			

69	ֆամոտիդին 20մգ; 5մլ դեղափոշի լիոֆիլացված ներարկման լուծույթի՝ Քվամատել	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ, Հունգարիա	ֆամոտիդին 20մգ; 5մլ դեղափոշի լիոֆիլացված ներարկման լուծույթի	սրվակ	**853.63**	**1024356**	1200			
70	ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) 10մգ/մլ, 1մլ լ-թ ներարկման՝ Մեզատոն	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ, Գյոմրոի ճ. 19-21, 1103 Բուդապեշտ	ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) 10մգ/մլ, 1մլ լ-թ ներարկման	ամպուլա	**77**	**23100**	300			
71	ֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) /դիմեդրոլ/ 10մգ/մլ, 1մլ ամպուլներ,լուծույթ ներարկման		ֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) /դիմեդրոլ/ 10մգ/մլ, 1մլ ամպուլներ,լուծույթ ներարկման	սրվակ	**21.74**	**177398.4**	8160			

***Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:**

***Ծանոթություն**

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

դ.Գնման առարկայի պահպանումն և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:

***Ծանոթություն** – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

*** Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա :**

******Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ. Ստեփանյան 13, «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:***

*******Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:***

********Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:***

ԳՆՈՐԴ

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք. Կապան, Մ. Մտեփանյան13
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն՝ Կ. Մելքոնյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա. Ասատրյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 31 » հունվար 2018 թ. կնքված
«ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/6"1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			վեցերորդ	մարտ	մայիս	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1		տրանեքսամաթթու 50 մգ/մլ 5 մլ՝ Տրանեկսամ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
2		տրանեքսամաթթու 250 մգ դ/հ՝ Տրանեկսամ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
5		ռանոլազին 500մգ,դեղահատեր երկարատև ձերբազատմամբ ՝ Ռանեկսա		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
8		ցիտիկոլին 1000 մգ/ 4 մլ 4 մլ լ-թ ներարկման՝ Սոմազինա		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
9		մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ՝40մգ/մլ+45.2մգ/մլ, 10մլ ,խտանյութ կաթիլաներարկ-ման լուծույթի՝ Պանանգին ամպ. 10 մլ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
11		մետրոնիդազոլ 0.5 դ/հ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
14		նատամիցին 100մգ մոմիկներ հեշտոցային՝ Պիմաֆուցին մոմիկ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
16		նատրիումի թիոսուլֆատ սրվ. 30% 5 մլ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
26		պիրացետամ 400 մգ դ/հ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%

31		ջուր ներարկման համար 2 մլ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
32		ռանիտիդին (ռանիտիդինի հիդրոքլորիդ) 150 մգ դ/հ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
34		սիլիմարին 22,5մգ, դեղահատ թաղանթապատ՝ Կարսիլ թ/պ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
35		սուլոդեքսիդ 300LՄ/մլ, 2մլ ամպուլներ,լուծույթ ն/ե և մ/մ ներարկման՝ Վեսել ԴՈՒԷՖ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
36		սուլֆոկամֆոկային 10% 2 մլ լ-թ ներարկման		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
39		վինպոցետին 25 մգ/5 մլ 5 մլ լ-թ ներարկման՝ Կավինտոն		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
40		վինպոցետին 5մգ/մլ, 2մլ ամպուլնե լ-թ ներարկման		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
42		վիտամին B1,վիտամին B2, վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ 5մգ/մլ+2մգ/մլ+ 2մգ/մլ+3մգ/մլ+ 20մգ/մլ, 2մլ ամպուլներ, լուծույթ ներարկման՝ Վիտամին Բ կոմպլեքս		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
46		տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ) 35 մգ դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
47		ցեֆազոլին (ցեֆազոլին նատրիում) 1000 դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
49		ցեֆիքսիմ 400 մգ դ/հ՝ պանցեֆ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
50		ցեֆոտաքսիմ (ցեֆոտաքսիմ նատրիում) 1000մգ, ապակե սրվակ և 4մլ լուծիչ ամպուլում,դեղափոշի ն/ե և մ/մ ներարկման լուծույթի՝ Կլաֆորան		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
54		ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում) 500մգ, ապակե սրվակներ դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
56		ցիանոկոբալամին 0,5մգ/մլ, 1մլ,լուծույթ մ/մ կամ ե/մ ներարկման		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
58		ցիպրոֆլոքսացին 250 մգ դեղահատեր թաղանթապատ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%

59		ցիպրոֆլօքսացին 500 մգ դեղահատեր թաղանթապատ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
62		քլորամֆենիկոլ ,10մգ/գ, 25գ ալյումինե պարկուճ,նրբամածուկ՝ Սինտոմիցինի նրբամածուկ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
63		քլորամֆենիկոլ ,5մգ/գ, 25գ ալյումինե պարկուճ,նրբամածուկ՝ Սինտոմիցինի նրբամածուկ՝		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
64		քլորամֆենիկոլ, մեթիլուրացիլ 7,5մգ/գ+40մգ/գ, 40գ, քսուք՝ մեկոլ-բորիմեդ քսուք 40 գ		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
69		ֆամոտիդին 20մգ; 5մլ դեղափոշի լիոֆիլացված ներարկման լուծույթի՝ Քվամատել		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
70		ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) 10մգ/մլ, 1մլ լ-թ ներարկման՝ Մեզատոն		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%
71		ֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) /դիմեդրոլ / 10մգ/մլ, 1մլ ամպուլներ,լուծույթ ներարկման		10 %	20%	30%	40 %	50%	60%	70 %	80%	90 %	100%	100%

**** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք. Կապան, Մ. Ստեփանյան13
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570026303980100
ՀՎՀՀ 09420382
Տնօրեն՝ Կ. Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ »ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա. Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ